

Սոււմերներու եւ հայ-սոււմերական յարարերութիւններու հարցի մասին

ԵՐՈՒԱՆԴԻ Հ. ՔԱՍՈՒՆԻ

Անցած հարիւր քառասուն տարիներուն, ու յատկապէս վերջին կէս դարուն, Մերձաւոր ու Միջին Արեւելքի հին քաղաքակրթութիւններու բազմաթիւ կեդրոններուն մէջ կատարուած պեղումներն ու գիտահետազոտական աշխատանքները նոր լոյս սփռած են սոււմերական աշխարհին վրայ, քողազերծելով անոր բազմաթիւ զաղտնիքները ու յեղաշրջելով վերոյիշեալ աշխարհամասի հնագոյն քաղաքակրթութիւններու շուրջ դարերու ընթացքին բանաձեւուած բազմաթիւ վարկածներ ու տեսութիւններ¹:

Հակառակ ցարդ կատարուած դիտահետազոտական հսկայական աշխատանքին սակայն, մէկ քանի երեւոյթներ կը մնան խոշոր հարցականի առաջ, որոնցմէ՝ յատկապէս սոււմեր փողովուրդի ծագման ու նախահայրենիքի պարզան: Վերոյիշեալ հարցի մասին յաջորդէջերուն մէջ ներկայացուած՝ մերթ զիւրար ամբողջացնող, երբեմն իրարմէ տարբեր, ու յաճախ իրարու հակադիր տեսակէտները լաւագոյնըս կը հաստատեն այդ իրողութիւնը:

1. Միջագետքի մասին դասական եւ միջնադարու ժամանակներուն մէջ գաբացած տեսակէտներուն, եւ վերջին երկու դարերուն հոն կատարուած հնագիտական պեղումներուն եւ գիտահետազոտական աշխատանքներուն համար տես. **The New Encyclopaedia Britannica, Macropaedia**, vol. 11, 1981, pp. 965-967; **Great Soviet Encyclopedia**, vol. 2, New York - London, 1973, pp. 417-419.


Հնագիտական պեղումներու սերտողութիւններն ու բազմաթիւ
կան լեզուադիտական ուսումնասիրութիւնները ցարդ կ'ընդունին թէ
երկիրը՝ հարաւային Միջագետքի ձուլածու տարածութիւնը, որ Ք.
Ա. երրորդ հազարամեակին ծանօթ էր Սումեր անունով², Ք. Ա.
4500-4000 թթ.ուն ընակուած էր ոչ-սումեր ժողովուրդի մը կողմէ³ :
«Հազիւ թէ հնարաւոր ըլլայ անոնցմէ դէթ փոքր մաս մը երրորդ հա-
զարամեակին ճանչնալ սուրարիներ⁴ անունով» : Հնագիտութեան մէջ
Սումերի նախարնիկները ծանօթ են Ուպայտի ժողովուրդ անունով :
Այսինքն՝ այն ժողովուրդը, որ Ուրէն ոչ հետու, էլ Ուպայտ հողարը-
լուէն յայտնաբերուած մշակութային ժառանգութեան տէրն էր : Նա-
եւ փորձեր կան այդ ժողովուրդը նախա-եփրատացիք անունով ճանչ-
նալու : Ինչ որ ալ ըլլան անուանակոչումները, այսօր դիտական աշ-
խարհին համար ընդունուած իրողութիւն է որ Սումերի նախարնիկ-
ները տէր էին բարձր քաղաքակրթութեան մը, եւ թէ՛ անոնք էին
Սումերի առաջին հողամշակները, անասնապահները, ձկնորսները,
ինչպէս նաեւ առաջին կտաւաղործները, հիւաները, մետաղագործնե-
րը, անօթներ պատրաստողներն ու շինարարները⁵ :

2. Քի-էն-կի գաղափարագիրը, որմով Սումեր, կամ աւելի ճիշդ՝ Շումեր
անունը արտայայտուած էր, ... կը գործածուէր իրբեւ վաղեմի յատուկ անուն մը
երկրամասին համար, ու կը կարդացուէր Քեմկի, կամ Քիմկի : Բայց Քի-էն-կի-րա
բառին գոյութիւնը սումերական երգի մը մէջ, ուր ան սեմական լեզուով մաթու՝
«երկիր» քարգմանուած է, կը քուի ցոյց տալ թէ քալամ բառին մտան ան գոր-
ծածուած է «երկիրը» ընդհանուր նշանակութեամբ : Քի-էն-կի-րա ձեւը կը քելագրէ
թէ վերջին ձայնաւոր վանկը պէտք է գործածուի իրբեւ լրացուցիչ ձայնաւոր, եւ
բառը պէտք է քարգմանուի շումեր-րա : Այս տեսակետին համաձայն, շումեր բա-
ռը, իր սկզբնական «երկիր» իմաստով, հետագային գործածուած է որպէս երկրա-
մասին տրուած յատուկ անուն (տես՝ Leonard W. King, **A History of Su-
mer and Akkad**, London, 1923, p. 14, f. n. 2) :

3. Հարաւային Միջագետքի մէջ հաստատուած ամենավաղ բնակիչներուն
կողմէ պատրաստուած խեցեղէնը ցոյց կու տայ թէ անոնք եկած էին Պարսկաստա-
նէն (տես՝ Henri Frankfort, **The Birth of Civilization in the Near East**,
1968, London, p. 45) : Այս տեսակետը այժմ ենթակայ է լուրջ կասկածներու,
որուն կ'անդրադառնանք յաջորդ էջերուն մէջ :

4. Նախահայրերը կամ մօտիկ ցեղակիցները հուրբիներուն (տես՝ **The New
Encyc. Britannica, Macropaedia**, vol. 11, p. 968.

5. Տես՝ Samuel N. Kramer, **The Sumerians**, Chicago, 1970, pp.
39-41; H. Frankfort, **The Birth of Civilization...**, p. 46.



Սումերի նախաքննիչներուն, կամ այլապէս ծանօթ ուսպայտացիներուն մենատիրութիւնը երկար չի տեսեր սակայն: Սուրիական անապատի, ինչպէս նաեւ Արարական թերակղզիին սեմացի քոչուոր ժողովուրդները, մերթ խաղաղ դաղթերով ու մերթ ուղմական միջոցառումներով կը թափանցեն Սումեր, ու կը դրանեն անոր բնակուած կեդրոնները: Այս թափանցումները կը շարունակուին չորրորդ հազարամեակի ընթացքին եւս: Ու անհաւանական չէ որ այս երկու ժողովուրդներու միաձուլումէն կը ծնի Սումեր երկրին նախասումերական քաղաքակրթութիւնը⁶:

Սումերներու՝ Սումեր թափանցումին ամենէն հաւանական ժամանակը կը թուի ըլլալ Գ. Ա. չորրորդ հազարամեակի առաջին կէսը: Բայց «տակաւին բաւական անորոշ է» թէ ճիշդ ուր կը դանուէր սումերներու առաջին բնակավայրը: Դատելով Էնմերքարի ու Լուկալբանտայի շուրջ դարձող գիւցադնալէպի մը պատումներէն, կը պարզուի թէ սումեր առաջին իշխանաւորները «անսովոր կերպով մօտիկ ու մըտերիմ յարաբերութիւն մը ունէին Արաթա քաղաք-պետութեան հետ»: Արաթան հաւանաբար կը դանուի Կասպից Ծովու շրջանին մէջ: Սումերներէնը բարդբառային լեզու մըն է, որոշ չափով Ուրալ-ալթական լեզուները յիշեցնող. եւ այս անգամ մը եւս մեզ կ'առաջնորդէ Կասպից Ծովու շրջանը, Արաթայի տեղը որոշելու: Սումերներու՝ Սումեր թափանցումէն, ու տեղի ժողովուրդներուն հետ միաձուլումէն ետք, «յաջորդ դարերու ընթացքին, Սումեր հասաւ քաղաքական հզօրութեան ու տնտեսական հարստութեան նոր բարձունքներու, եւ ականատես եղաւ նշանակալից իր շարք մը նուաճումներուն՝ արուեստներու եւ արհեստներու, կոթողային ճարտարապետութեան, կրօնական ու բարոյախօսական միտքի, ինչպէս եւ բանաւոր առասպելի, գիւցադներգութեան ու երգի մարգերուն մէջ: Այս բոլորէն վեր, սումերները, որոնց լեզուն տակաւ դարձաւ տիրապետող լիւսքը երկրին, ձեւակերպեցին դրեյաձեւ մը, զոր դարգացուցին հաղորդակցութեան ազդու դործիքի մը, եւ առին առաջին քայլերը դէպի պաշտօնական մանկավարժութեան մը պատրաստութեան»⁷:

Սումերական ականդութիւն մը, որ կ'արձագանդէ աքքադեան, հրէական եւ յունական (Պերոսոս) ականդութիւններու ընդմէջէն, կը պատմէ թէ սումերները՝ ծովու ճամբով՝ Պարսից Ծոցէն դալով հաս-

6. S. N. Kramer, *The Sumerians*, p. 42: Յարդ ընդունուած տեսակէտ մը, որ այժմ ենթակայ է հարցադրումներու: Կ'անդրադառնամք աւելի ետք:

7. Նայնը, էջ 42-43:

տատուած են Սուժեր⁸ : Ըստ այդ աւանդութեան, առասպելական էակներէ կազմուած զարդացած Ժողովուրդ մը, ձուկի կերպարանքով (Օտանէսներ)՝ առաւօտները Ծոցէն դուրս կու գային, որպէսզի իրիկունը վերադառնան իրենց տեղը : Այս աւանդութենէն թելադրուած՝ դիտնականներ անհաւանական չեն դտներ որ սուժերներ եկած են եթէ ոչ լեռներու, զէթ բլուրներու շրջանէ մը, եւ Միջագետք մտած Պարսից Ծոցի ճահճային շրջաններէն⁹ : Այս տեսակէտը արդի պատմագրութեան մէջ ունեցած է իր պաշտպանները¹⁰ : Սակայն ծանօթ սուժերագէտ Լէոնարտ Քինկ կը պատասխանէ թէ առասպելէ մը քաղուած այս տեղեկութիւնները «միայն կը մատնանշեն Ծոցի եզրի Ծովու-երկրին՝ որպէս երկրին մէջ սուժերական մշակոյթի հնագոյն կեդրոնի մը»¹¹ :

Քինկ, ընդունելով հանդերձ թէ «անկարելի է վստահութեամբ խօսիլ» սուժերներու նախահայրենիքին մասին¹², կ'աւելցնէ թէ «մենէն աւելի հաւանական է որ սուժերները Բարբելոն իջան Արեւելքի լեռներէն : Իրենց մուտքը այս երկիրը, ուրեմն, եղած է այդ շրջանին [ծայր տուած] բազմաթիւ դաղթերէն առաջինը, որպէս հետեւանք կեդրոնական Ասիոյ կլիմայական ու Ֆիզիքական փոփոխութիւններուն»¹³ :

Ծանօթ այլ արեւելագէտի մը՝ Հ. Ռ. Հոլլի համաձայն, սուժերական մշակոյթը Միջագետքի հողին վրայ «պատրաստի» հասած ըլլալու տպաւորութիւնը կը ձգէ, որ եկած է դուրսէն : Սուժերական մշակոյթի առաջին հանգրուանները զարդացած են ոչ թէ Միջագետքի, - կը դրէ հեղինակը, - այլ պարսկական լեռներէն դէպի արեւելք՝ ուրիշ երկրի մը մէջ : Եւ Հոլլ «անհաւանական» չի դտներ որ սուժերները «հնդկական ցեղ մըն էին, որոնք, վստահօրէն ցամաքի ճամբով, ու թերեւս նաեւ ծովու ճամբով, Պարսկաստանի մէջէն անցած են դէպի երկու Գետերու հովիտը : Մենք կ'ենթադրենք թէ հնդկական հայրենիքի մէջ էր (թերեւս Ինտոսի հովիտը), ուր զարդացաւ իրենց մշակոյթը» : Սակայն հեղինակը չի մոռնար աւելցնելու. «Ասիկա ընդունելի տեսութիւն մը կը թուի սուժերներու ծագումին [մասին], եւ թէ յըս-

8. W. W. Hallo, W. K. Simpson, **The Ancient Near East**, N. York, 1971, pp. 28-29.

9. **Les Premières Civilisations**, Paris, 1950, pp. 94-95.

10. S. Moscati, **The Face of the Ancient Orient**, London, 1960, p. 20, f. n. 2.

11. L. W. King, **A History of...**, p. 53.

12. Նոյնը :

13. Նոյնը, էջ 54 :

տակօրէն հասկնալի պէտք է դառնայ որ ան կը ներկայացուի ներկայ դրողին կողմէ սոսկ որպէս վարկած, որ սարացոյց չունի զայն պաշտպանելու, բայց հաւանական կը թուի»¹⁴ :

Հ. Ռ. Հոլ առանձին չէ սակայն իր այս տեսակէտին մէջ: Կ. Կերամ կը մէջբերէ Արթըր Քէյտը, որ կ'ըսէ. «Հին շումերներին բնորոշ գըծերը կարելի է այսօր էլ նկատել արեւելքում՝ Աֆղանիստանի, Պելուճիստանի եւ էլ աւելի հեռաւոր վայրերի բնակիչների մօտ, ընդհուպ մինչեւ Ինտոսի հովիտը»¹⁵: Կերամ ապա կ'աւելցնէ թէ Քէյտ «դեռ այդ միտքը չէր արտայայտել, երբ Ինտոսի հովտում կատարուած պեղումները ժամանակ, որտեղ յաջողուեց յայնսարբերել բարձր զարգացած հին կուլտուրայի հետքեր, դտնուեցին ուղղանկիւն կնիքներ, որոնք իրենց ձևով ու իրենց վրայ փորագրուած արձանագրութիւններով չափազանց նման են Շումերում դտնուած կնիքներին»¹⁶ :

Սումերներու նախահայրենիքի մասին «չատ քիչ [բան] դիտենք», կը գրէ Շորկըն Լիսսէօէ, եւ սակայն կ'աւելցնէ. «Հաւաստի պէտք է նկատել թէ սումերական դաղթը դէպի Միջագետք տեղի ունեցաւ արեւելքէն»¹⁷ :

Սումերական ճարտարապետական յուշարձաններուն մէջ առանձնապէս ուշագրաւ են զիկկուրաքները¹⁸, որոնք թելադրած են կարգ մը հնագէտ-պատմաբաններու, թէ նման կառոյցներու հեղինակները կրնային նախկին լեռնաբնակներ ըլլալ: «Մարդիկ, որոնք երկըրպագում էին լեռնագագաթներում ապրող աստուածներին եւ նրանց համար կառուցում էին արհեստական լեռներ՝ զիկկուրաթներ, չէին կարող լինել տափաստանի ծնունդ: Շատ հաւանական է, որ նրանք եկել են Իրանի բարձր լեռնային շրջաններից, իսկ գուցէ էլ աւելի հեռաւոր վայրերից՝ Ասիայի լեռնային շրջաններից»¹⁹ :

Վերոյիշեալ տեսակէտի պաշտպանութեան համար նաեւ համոզելի կը նկատուէր այն իրողութիւնը որ սումերները նոյն գաղափարազերը կը գործածէին «լեռ» եւ «երկիր» մտապատկերը արտայայտելու

14. H. R. Hall, **The Ancient History of the Near East**, London, 1936, pp. 172-174.


15. Կ. Կերամ, Աստուածներ, Դամբարաններ, Գիտնականներ, Երևան, 1971, էջ 324-325:

16. Նոյնը, էջ 325:

17. Jorgen Laessoe, **People of Ancient Assyria**, London, 1963, p. 14.

18. Դարատափերով քրգային տաճար-աշտարակ, որում իւրաքանչիւր յարկը ներքեւի յարկէն աւելի փոքր է:

19. Կ. Կերամ, Աստուածներ, Դամբարաններ... , էջ 324:



Ուրի գիկկուրաբը

Համար: Սակայն, ինչպէս կը հաւաստէ Քինկ, գիկկուրաթները՝ բացառութեամբ Նիբբուրի մէջ կառուցուածին, սումերական հին տաճարներուն բնորոշիչ յատկանիշը չէին: Եւ թէ՛ «այժմ ծանօթ իրողութիւն է թէ «լեռ» եւ «երկիր» դադարաւարադիրը վաղ շրջաններուն կը գործածուէր օտար երկիրներու համար, ի հակադրութիւն իրենց՝ սումերներու երկրին»²⁰:

Զիկկուրաթներու համար Հ. Ֆրանքֆորթ ունի իր առանձին բացատրութիւնը: «Զիկկուրաթներու նշանակութիւնը, – կը գրէ ան, – կը յայտնաբերուի անուններով, զորս անոնցմէ շատեր կը կրեն. անուններ, որոնք կը բնութագրեն զանոնք որպէս լեռներու: Նիբբուրի մէջ էնլիլ աստուծոյ [տաճարը], օրինակի համար, կը կոչուէր «Լեռան Տունը, Փոթորիկի Լեռը, Կապ Երկինքի եւ Երկրի միջեւ»: Աբգ, «լեռ» [բառը], այնպէս, ինչպէս գործածուած է Միջագետքի մէջ, այնքան կրօնական նշանակութեամբ լիցքաւորուած եզր մըն է, որ անոր սովորական թարգմանութիւնը արդար պիտի չըլլար, ինչպէս «խաչ» բառին [սովորական թարգմանութիւնը] քրիստոնէական կրօնքին գործածութեան մէջ... Միջագետքի մէջ «լեռ»ը այն տեղն է, ուր երկրին, եւ ուրեմն ամբողջ բնական կեանքին խորհրդաւոր կարողականութիւնը խտացած է»²¹:

«Երբեմն ըսուած է, – կը շարունակէ Ֆրանքֆորթ, – թէ սու-

20. L. W. King, **A History of...**, pp. 53-54.

21. H. Frankfort, **The Birth of Civilization...**, p. 54.

մեքենքը իջնելով լեռնային շրջաններէ, ցանկացին իրենց աստուածներուն պաշտամունքը շարունակել «Ֆարձր Տեղեր»-ու վրայ, եւ ուրեմն՝ տափարակ վայրերու վրայ կառուցանեցին դանոնք: Հարցը այն է թէ ինչու անոնք «Ֆարձր Տեղեր»-ը նպատակալարմար սեպեցին, յատկապէս երբ պաշտուած աստուածները միայն երկնային աստուածներ չէին, բայց նաեւ, ու դերիշող կերպով, երկրային աստուածներ: Մեր մեկնարանութիւնը մեկնակէտ ունի «լեռ»-ը ոչ որպէս աշխարհազրական երեւոյթ, այլ որպէս բներեւոյթ՝ լիցքաւորուած կրօնական նշանակութեամբ»²²:

Սումերական հարցի մասին ձորճ Ռուլի կատարած մատնանշուներն ու ընդհանրացումները հաւանաբար լաւագոյնս կը բնութագրեն ինդերին առեղծուածային կացութիւնը:

«Որո՞նք են այս սումերները», - հարց կու տայ հեղինակը: «Արդեօ՞ք անոնք կը ներկայացնեն բնակչութեան շատ հին խաւ մը նախապատմական Միջագետքի մէջ, թէ՛ անոնք եկան ուրիշ երկրէ մը. ու եթէ այդպէս է, ե՞րբ եկան անոնք, եւ ուրի՞ց: Այս կարեւոր հարցը, շուրջ մէկ դարէ ի վեր, սկսած սումերական քաղաքակրթութեան առաջին բեկորին յայտնաբերումով²³, կրկին ու կրկին վիճարանութեան նիւթ դարձած է, ու տակաւին կը մնայ մեզի հետ: Նորագոյն յայտնաբերումները, հեռու՝ լուծում մը առաջարկելէ, մինչեւ իսկ աւելի դժուարացուցած են [հարցին] պատասխան [մը գտնելը], բայց դէթ անոնք հայթայթած են նոր եւ շօշափելի պատճառաբանութիւններ հին վէճի մը, ու այս նոր լոյսին տակ է որ պէտք է քննարկուի «Սումերական Հարցը»²⁴:

Հեղինակը ապա հաստատօրէն կ'աւելցնէ. «Ուրիշ կէտ մը պէտք է բաւականին յստակ ըլլայ. սումերական «ցեղ» ըսուած բան մը գոյութիւն չունի, եղրաբանութեան ո՛չ գիտական, եւ ո՛չ ալ սովորական իմաստով»²⁵:

Տակաւին՝ ձորճ Ռուլ, մեկնելով սումերական առասպելներու ու զրոյցներու բովանդակութենէն կը տարուի մտածելու թէ սումերներ՝ Միջագետքէն տարբեր հայրենիք չեն ունեցած²⁶: Եւ ապա՝ կ'եզրակացնէ. մարդ «մինչեւ իսկ կը փորձուի կասկածանքով հարցադրե-

22. Նոյնը, էջ 54, ծան. 1:

23. Սումերներու յայտնաբերման առաջին փայլերուն համար տես՝ Կ. Կե-րամ, Աստուածներ, Դամբարաններ... էջ 312-313:

24. George Roux, **Ancient Iraq**, London, 1964, p. 75.

25. Նոյնը, էջ 76:

26. Նոյնը:

լու թէ եթէ երբեք [սումերական] հարց դոյութիւն ունի: Սումերները՝ էին, ինչպէս մենք բոլորս ենք, ցեղերու ու հաւանաբար ժողովուրդներու խառնուրդ մը. անոնց քաղաքակրթութիւնը, ինչպէս մերը, խառնուրդ մըն էր օտար եւ բնիկ տարրերու. անոնց լեզուն կը պատկանի լեզուախումբի մը՝ բաւական ընդարձակ, որ ծածկած էր ամբողջ Արեւմտեան Ասիան, ու դեռ աւելի: Անոնք, ուրեմն, նաեւ կրնան ներկայացնել մէկ ճիւղը այն բնակչութեան, որ վաղ Նոր Քարի ու Պղինձի Գարու ժամանակաշրջանին գրաւեց Մերձաւոր Արեւելքի մեծ մասը: Այլ խօսքով՝ ինչ որ կրնանք ըսել [այն է թէ] անոնք «միշտ» ալ Իրաքի մէջ կրնային եղած ըլլալ»²⁷:

Սումերներու՝ Միջագետքի բնիկները եղած ըլլալու տեսութիւնը ունի իր այլ պաշտպանները եւս: Փրոֆ. Ճ. Է. Սմիթ, «Հին Եգիպտացիները» խորագրով իր աշխատութեան մէջ հաստատապէս կը մերժէ սումերներու Բարելոն գաղթած ըլլալու վարկածը, ու զանոնք կը նկատէ «արեւելեան թեւը» միջերկրականեան թուիս ցեղին²⁸:

Արեւելագէտ Իկոր Տիակոնոֆ կը հակի մերժելու նախասումերական խաւի մը դոյութիւնը հարաւային Միջագետքի մէջ, երբ կը գրէ. «Ամբողջ հարաւային Միջագետքի ժողովուրդը ցեղախօսականօրէն առաւել կ'ամ նուազ չափով համասերօրէն սումերական էր՝ ինչպէս ընթեռնլի մասերը պատկերազրական վաւերագիրներուն կը մատնանշեն. հնագիտական յայտնագործումները բաւարար չափով չեն հաստատեր ընդհանրացած կարծիքը՝ մինչ այդ դոյութիւն ունեցող նախասումերական ենթախաւային ժողովուրդի մը. ոչ-սումերական ցեղային ենթախաւ մը, եթէ երբեք եղած է, ամբողջութեամբ ձուլուած պէտք էր ըլլար սումերական ցեղին կողմէ»²⁹:

Սեթոն Լօյտ իր հրատարակած վերջին ուսումնասիրութեան մէջ կը մերժէ սումերներու Միջագետք գաղթած ըլլալու տեսութիւնը, ու «անիմաստ» կ'որակէ նախասումերական քաղաքակրթութեան մը դոյութիւնը այնտեղ³⁰:

27. Նոյնը, էջ 78:

28. H. K. Hall, *The Ancient History...*, p. 174, f. n. 5.

29. Igor M. Diakonoff, *The Rise of Despotism in Ancient Mesopotamia* (1956), in; I. M. Diakonoff (ed.), *Ancient Mesopotamia*, Moscow, 1969, p. 186.

30. Seton Lloyd, *The Archaeology of Mesopotamia*, London, 1978, p. 64
Սեթոն Լօյտ միշտ չէ որ պաշտպանած է այս տեսակետները: Տասնամեակներու ընթացքին ան կարծիք ու դիրք փոխած է այս մասին: Մանրամասնութեանց համար տես՝ Աստ, էջ 227-230:

«Որո՞նք են այս սուժերները», հարց կու տայ Միլթըն Գուլենսթըլը: «Յարդ պատմարաններ չեն համաձայնիր անոնց ծագման [չուրջ], եւ միայն էական համամտութեան մէջ են որ անոնք (սուժերները, Ե. շ. Բ.), ներխուժողներ էին եւ ոչ թէ Միջագետքի բնիկներ»: Բայց հեղինակը կը շարունակէ. «Համաձայն իրենց աշխարհը դիտելու վիպաստեղծ եղանակին, սուժերները հաւատացած էին որ իրենք Միջագետքի մէջ ապրած են աշխարհի ստեղծումէն ի վեր»³¹:

Սուժեր ժողովուրդի ծագման հարցի մասին արտայայտուած վերոյիշեալ տարբեր կարծիքներու կողքին, նաեւ կան անոնք, որոնք կը խուսափին դիւրբորոշուելէ, ու կը շեշտեն հարցին դրեթէ անլուծելի բնոյթը:

Արդի պատմագրութեան կարեւորագոյն ամբիոններէն՝ Գեմպրիւհ համալսարանի «Հին Պատմութիւն» բազմահատորեակին մէջ կը կարդանք. «Համադրող դադափարները եւ նիւթական սարքը այս քաղաքակրթութեան կը կոչուին սուժերական, որուն համար ամբողջական արդարացում գոյութիւն ունի, այսուհանդերձ, դժուար է սահմանել թէ ովքեր էին սուժերները: Անկախ իրենց հեռուոր ծագումի ու ցեղային առընչութեան հարցէն, որուն մասին քիչ կամ ոչինչ կարելի է ստուգութեամբ հաստատել, առկայ է դժուարութիւնը զանոնք ուրիշ ժողովուրդներէ զանազանելուն. [ժողովուրդներ], որոնց ներազդեցութիւնը վերոյիշեալ սահմանադրուած երկրին (Միջագետք, Ե. շ. Բ.) մէջ, յտակօրէն դրոշմուած է պատմական ժամանակաշրջանի անմիջական սկիզբին. [ժողովուրդներ], որոնք հիմա սեմացիք կը կոչուին»³²:

«Հարցը, թէ որո՞նք էին սուժերները, ցարդ կը մնայ անլոյծ, եւ այդպէս ալ կրնայ մնալ»³³, կը գրէ Ն. Բ. Սանտըրը:

Բայց առաւել դիպուկ է արեւելագէտ Շ. Ֆրանքֆորթի արտայայտութիւնը սուժերներու ծագման ու անոնց նախահայրենիքի առեղծուածին մասին. «Այնքան շատ արծարծուած սուժերներու ծագման հարցը ի վերջոյ կրնայ ցնորքի մը հետապնդումին վերածուիլ»³⁴, կը գրէ ան:

Սակայն այնքան յոռետես չէ Կ. Կերամ երբ կը գրէ. «Եւ սա-

31. Milton Govenky, **The Ancient Near Eastern Tradition**, New York, 1966, pp. 22-23.

32. **The Cambridge Ancient History**, vol. 1, part 2, Cambridge, 1971, p. 99.

33. **The Epic of Gilgamesh**, by N. K. Sandars, London, 1972, p. 57.

34. H. Frankfort, **The Birth of Civilization...**, p. 50, f. n. 1.

կայն այն հարցը, թէ որտեղից է եկել այդ խորհրդաւոր ժողովուրդը (սումեր, Ե. Հ. Ք.), մինչեւ օրս էլ մնում է բաց: Սակայն՝ համբերենք: Յիշենք, թէ դարերի ինչպիսի հեռուներն են մեզ տանում «սեւազլուինների» երկրում կատարուած յայտնադուրմուհները եւ առայժմ բաւարարուենք նրանով, որ «արքայական ցուցակները» մեր առջեւ բացում են էլ աւելի հեռաւոր հեռանկարներ»³⁵:

Որքան վիճելի կը մնայ սումեր ժողովուրդին ծագման ու նախահայրենիքի հարցը, անոր հետ նոյնքան անորոշ կը մնայ սումեր լեզուին ճշգրիտ բնորոշումն ու բնութագրումը:

«Սումերերէնը մաժուցիկ-բարդբառային լեզու մըն է, որոշ չափով Ուրալ-ալթայական լեզուները յիշեցնող»³⁶, կը դրէ ծանօթ սումերագէտ Սամուէլ Ն. Քրէյմըրը, որ սումերներուն նուիրուած իր մէկ այլ յօդուածին մէջ առաւել եւս կը մանրամասնէ իր տեսակէտը, թէ՛ «Սումերերէնը մաժուցիկ-բարդբառային լեզու մըն էր, իր կառուցային ու քերականական կարգ մը յատկանիշերով թրքերէնին ու հունգարերէնին նմանող»³⁷:

Կ. Կերամ նոյնպէս համաձայն է վերոյիշեալ տեսութեան. «Շումերների լեզուն նման է հին թուրքական (համաթուրքական) լեզուին»³⁸, կը դրէ ան: Սակայն դիրքը ծանօթագրողը, որուն անունը դժբախտաբար կը մնայ անծանօթ, անդրադառնալով Կերամի յիշեալ յայտարարութեան, կը ծանօթադրէ. «Չի կարելի պնդել, որ շումերեան լեզուն նման է հին թուրքերէնին. շումերեան լեզուն նման չէ մեզ յայտնի կենդանի կամ մեռած լեզուներէց ոչ մէկին»³⁹:

«Բրիտանական Համայնագիտարան»ի նորագոյն հրատարակութեան մէջ լոյս ընծայուած տարբեր յօդուածներ՝ երկու տարբեր կարծիք կը յայտնեն սումեր լեզուի մասին: «Սումերերէնը՝ որոշ մաժուցիկ նկարագրով, կը թելադրէ մոնկոլական լեզուներու ընտանիքին պատկանած ըլլալու երեւոյթը»⁴⁰, կը կարդանք առաջինին մէջ: Իսկ «Միջագետքի եւ Իրաքի Պատմութիւնը» խորագրով յօդուածին մէջ

35. Կ. Կերամ, *Աստուածներ, Դամբարաններ...*, էջ 325:

36. S. Kramer, *The Sumerians*, p. 42.

37. S. Kramer, *Sumer*, in: *The Encyclopedia Americana*, vol. 26, 1975, p. 6.

38. Կ. Կերամ, *Աստուածներ, Դամբարաններ...*, էջ 324:

39. Նոյնը, էջ 441, ծան. 15:

40. *Encyc. Britannica, Macropaedia*, vol. 11, p. 573.

կ'ըսուի. «Փորձերը՝ ժամանակակից եղանակներով աւելի մօտէն բընորոշելու սուժերէնը ցարդ մնացած են անյաջող, եւ շատ հաւանաբար մնան ալդպէս: ... Հետեւաբար, անկարելի է ճշգրիտ տեղեկութիւն մը ստանալ թէ սուժերէնը նախապէս ինչ լեզուախումբի պատկանած է»⁴¹: Սակայն համայնագիտարանի խմբադրութիւնը կը մնայ երկրորդ տեսակէտի կողքին: Անոր համաձայն. «Լեզուապէտներ չեն յաջողած փաստել արնչութիւնը սուժերէնին՝ ուրիշ որեւէ ծանօթ լեզուի հետ»⁴²:

«Լեզուաբանական Բառարան»ը սուժերէնը բնութագրելու համար կ'ապաւինի «ասիական լեզու»⁴³ շատ աղօտ բացատրութեան:

«Միջագետքի ամենավաղ բնակիչները շումերներն են, որոնց լեզուական պատկանելիութեան (ցեղակցութեան) հարցը լեզուաբանութեան կողմից վերջնականապէս չի ճշգրտած»⁴⁴. կը դրէ Գէորգ Զահուկեան:

Սուժերէնը «ոչ մէկ արնչութիւն ունի հնդեւրոպական կամ սեմական լեզուներուն հետ»⁴⁵, կ'ըսէ Մ. Գոլլենսքի, իսկ Եորկըն Լիսսէօէյի համաձայն՝ «սուժերէնը բաւականին մեկուսացած ըլլալ կը թուի. ցարդ հնարաւոր չէ եղած ապացուցել ազգակցութիւնը սուժերէնի եւ հին աշխարհին ծանօթ ուրիշ որեւէ լեզուի միջեւ»⁴⁶:

Շեշտակի եւ խիստ բնոյթ ունի Փրոֆ. Լոուկոտկայի տեսակէտը, ըստ սրուն. «... թէպէտ [սուժերէնը] մեզ աւելի է յայտնի, քան շատ աֆրիկեան եւ ամերիկեան կենդանի լեզուներ, սակայն մենք այդ լեզուն ոչ մի ընտանիքի մէջ չենք կարող մտցնել, եւ այն մնում է մեկուսացած: Այդ լեզուն այս կամ այն լեզուախումբի շարքը դասելու բոլոր փորձերը կամ անհիմն էին, կամ երեւակայական»⁴⁷:

*
**

Մեր անմիջական հետաքրքրութեան սահմաններէն դուրս պիտի մնար սուժեր ժողովուրդի ծագման, նախահայրենիքի եւ լեզուի հար-

41. Նոյնը, էջ 969:

42. Նոյնը, Թ. հար., էջ 667:

43. Հ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարաբիլեան, *Լեզուաբանական Բառարան*, Երեւան, 1975, էջ 281:

44. Գ. Զահուկեան, *Լեզուաբանութեան Պատմութիւն*, Ա. հար., Երեւան, 1960, էջ 12:

45. M. Covensky, *The Ancient Near Eastern...*, p. 23.

46. J. Laessoe, *People of Ancient...*, p. 14.

47. Զ. Լոուկոտկա, *Գրի Զարդացումը*, Երեւան, 1955, էջ 38:

յը, եթէ երբեք վերջին տասնամեակներուն հայ պատմադրութեան մէջ չարժարժուէր հայ-սովետական յարաբերութեանց լինելիլը, ու այդ-տեղէն հանուած եզրակացութիւնները չօգտագործուէին որպէս կարեւոր յենակէտերէն մէկը հայ ժողովուրդի ծագման ու կազմաւորման հարցը լուծելու :

Եթէ երբեք նախորդ էջերուն մէջ ընդարձակ քաղուածքներ կատարեցինք վերոյիշեալ հարցի մասին արտայայտուած վարկածներէն, տեսութիւններէն ու դիրքորոշումներէն, այդ միայն անոր համար որ արձանագրած ըլլանք յստակօրէն, թէ վերոյիշեալ սովետական հարցերէն ոչ մէկը ցարդ իր լուծումը ստացած է պատմադրութեան մէջ, եւ թէ՛ հոն արտայայտուած կարծիքներէն մէկուն կամ միւսին ապաւինած՝ նոր թեզեր առաջադրելն ու պաշտպանելը կը դառնայ կանխահաս, չըսելու համար հակադիտական :

Հայ-սովետական մշակութային կապերու առնչութեամբ առաջին ակնարկութիւններէն մէկը, զոր կը կարդանք արդէ հայ պատմադրութեան մէջ, շեշտակի կերպով կը խօսի Ք. Ա. 4-3-րդ հազարամեակին՝ Միջագետքէն դէպի հիւսիս, Հայաստանի վրայ տարածուող սովետա-բարեխաղան մշակոյթի մասին :

«Մօտաւորապէս չորրորդ-երրորդ հազարամեակում (Ք. Ա.) Հայաստանի վրայ տարածուած էր սովետա-բարեխաղան կուլտուրայի ազդեցութիւնը Միջագետքից»⁴⁸ :

Հայ-սովետական առնչութիւններու մասին, սակայն, «բացարձակապէս համոզուած», բայց եւ շատ համարձակ տեսակէտ մը հրապարակ կը դրուի 1964 թ.ին, Գ. Կիւլպենկեանի կողմէ, որ «Սանասար եւ Բաղդասար» գիւլգաներգութեան մեկնարանութիւնը կատարելու ճանապարհին, կը յայտարարէ. «... ես բացարձակապէս համոզուած եմ, թէ սիւմերները եթէ չեն իսկ պատկաներ հայ ցեղին, բայց շատ երկար ժամանակ մնացած են Հայաստան եւ իրենց լեզուն ու կրօնական դադափարները պարտադրած տեղական ժողովուրդին...»⁴⁹ :

Կիւլպենկեան իր այս եզրակացութեան կը հասնի գլխաւորաբար ապաւինելով հայ եւ սովետ լեզուներու ունեցած (?) առնչութիւններուն : Հեղինակին համաձայն, սովետերէնը «... հաւանականաբար լեզուն էր պատմութեան մէջ «Ալլեան լեռնցիներ» անունով ճանչցուած ցեղախումբերուն, որոնք Ուրալի սառնակոյտերու հալելէն

48. Խ. Սամուէլեան, Հին Հայաստանի Կուլտուրան, Ա. հտր., Երեւան, 1931, էջ 63 :

49. Գ. Կիւլպենկեան, Մեկնարանութիւն «Սանասար եւ Բաղդասար» Գիւլգաներգութեան Ի Լոյս Սիւմերա-Հայ Բարբառի, «Պատմա-Բանասիրական Հանդէս», Բիւ 1, 1964, էջ 75 :

վերջ, Սիպերիական գալույլ տիրեցին մի կողմէ Եւրոպա, իսկ մյուս կողմէն Առաջաւոր Ասիան, եւ նոյնիսկ Եզրիպտոսը, տանելով իրենց հետ Բա կամ Բէ աստուծոյ պաշտամունքը»⁵⁰ :

Իսկ անդրադառնալով հայ եւ սումեր լեզուներու առնչութիւններուն, Կիւլպենկեան կը գրէ. «... Ինչ որ հայերէնը կը յատկանշէ ոչ թէ անհամեմատ աւելի թուով սիւմերական բառերու ներկայութիւնն է, այլ մանաւանդ զրեթէ բոլոր ընտանի անասուններու անունները, հազուատեղէնի վերաբերեալ բառերու մեծամասնութիւնը, մի ստուար մասը մարդկային մարմնի անուններուն, ինչպէս եւ մետաղագործութեան վերաբերեալ բառերուն կը գտնուին սիւմերական իզիոկրամներու կամ անոնց ընթերցման մէջ եւ ամենէն առաջ ընտանեկան կապերը նշանակող: Սիւմերերէն է նոյնպէս մեր տեղական եւ յատուկ անուններու մեծամասնութեան կազմութիւնը: Եթէ ասոնց վրայ աւելացնենք թէ մեր լեզուի բառերուն եւ անուններուն մէջ երեւոյզ զաւանանքը նոյնն է սիւմերական հին դիցարանութեան հետ, այն եզրակացութեան պէտք է յանդել, թէ հայերը եւ սիւմերները եթէ նոյն ցեղին իսկ չեն պատկաներ, այս վերջինները շատ կրկար ժամանակ մնացած են Հայաստան, ու իրենց լեզուն ու կրօնքը պարտադրած բնիկ ժողովուրդին»⁵¹ :

Տակաւին՝ Կիւլպենկեան կը գրէ. «... զարմանալի չէ, որ մեր բազմավանկ բառերուն մի շատ կարեւոր մասը կազմուած է սիւմերական իզիոկրամներուն միավանկ բառերով»⁵² : Եւ այդ գծով մէկ քանի օրինակներ յառաջ քաշելէ ետք, կը շարունակէ. «Այս մի քանի օրինակները բաւական են դադափար մը տալու բարբառի մը կազմութեան մասին, զոր կարելի է «սիւմերահայ» անուանել»⁵³ : Եւ այսպէս՝ «սումերահայ» բարբառի մը գիւտը ըրած ըլլալու հաւանութիւնը ունենալէ ետք, կը ծանրանայ «Սանասար եւ Բաղդասար» զիւցաղներգութեան⁵⁴ մէջ օգտագործուած շարք մը անուններու եւ բառերու, ինչպէս նաեւ դիցարանական երեւոյթներու վրայ (թիւով 53), փորձելով փաստել

50. Նոյնը, էջ 73:

51. Նոյնը:

52. Նոյնը, էջ 74:

53. Նոյնը:

54. Դիւցաղներգութեան «անցուդարձերուն» համար յօդուածագիրը կը հետեւի «Տիգրան Զիթունիի պատմութեան, քաղուած Մովսէս Գաւառի Սպարտկերտ աւանի մէջ... Այս գրոյցը պատմողն է գիւղացի Խաչոյի անգրագետ որդին՝ Կանչոյ» (տես՝ Նոյնը, էջ 76):

անոնց սումերական ծագումը, կամ՝ սումերականի հետ ունեցած կապակցությունը⁵⁵ :

Սակայն Կիւլպենկեան՝ «բացարձակապէս համոզուած» իր տեսակէտը կը տասպալէ իր իսկ եզրակացութեամբ, զոր կը կարգանք յօդուածի «Վերջարան»ին վերջին պարբերութեան մէջ: Արդարեւ, Կիւլպենկեան կը զրէ՛ .

«Այս դիւցազներգութիւնը սիւմերական զաղափարներու ազդեցութեան տակ յղացուած է հուրբիական միջնադարի մէջ բնակուած դանազան ցեղախումբերէ, ուր դեռ քաղաքական միութիւն զոյսութիւն չունէր...»⁵⁶ :

Նմանօրինակ եզրակացութենէ մը հտք ալ ինչպէ՞ս կարելի է «բացարձակապէս համոզուած» ըլլալ «թէ սիւմերները եթէ չեն իսկ պատկաներ հայ ցեղին, բայց շատ երկար ժամանակ մնացած են Հայաստան եւ իրենց լեզուն ու կրօնական գաղափարները պարտադրած տեղական ժողովուրդին», երբ հեղինակը ինքն է յայտարարողը թէ հուրբիներն են այն միջնորդ ժողովուրդը, որ սումեր լեզուին, ինչպէս

55. Կիւլպենկեանի ստուգաբանած բառերէն մէկն է *ասպարածինը*, որուն համար ան կը գրէ. «բառը անծանօթ է եւ չունի մի իմաստ: Ասպա կրնայ տառափոխութիւն լինել *Ապս*-ին (ինչպէս արմա բառը կը փոխուի ամբաւի). այն ատեն սիւմերերէնով հետեւեալ նշանակութիւնը կ'ունենանք $apsu - ra - zen = ra =$ «լուսաւոր»+ $zen =$ «ձօն» = ձօնը լուսաւոր Ապսուին, այսինքն էնֆի-էպին (տես նոյնը՝ էջ 85) :

Սակայն Տ. Զիքունի այլ մեկնաբանութիւն ունի *ասպարածին* բառին համար:

Սառուցի Դաւիթ որոշած է իր հօրը ֆանդուած վանքը վերակառուցանել: «Տեսիլքին մէջ՝ իրեն ըսուած էր որ վանքը պէտք էր շինել մէկ օրուան մէջ: Եթէ ոչ՝ ցերեկուան մէջ կանգնեցուցուածը կը ֆանդուէր գիշերը...»: Բանուորները կը սկսին աշխատանքի: Սակայն կառուցումը չաւարտած՝ անոնք ֆուն կը մտնեն: Անուտուն՝ վանքը չկար, ֆանդուած էր ամբողջութեամբ: Վանքին հրաշքը կրկին «եքազ կու գայ» Դաւիթին: «Դաւիթ, - կ'ըսէ, - քո դաշոյնը ֆաշէ հանէ՛ քո մէջ-էդ, վանքին հիմը քո դաշոյնին վրայ դիր: Վանքն ու մատուղը օրէ շինէ՛ լընցուր»: Դաւիթ կը հնազանդի պատուէրին: Կը կառուցուի վանքը, յետոյ՝ «Ֆառսուն - ֆառսուն մաւ-պատարագ մատուցին. օրէ՛նք առին մեծ ու փոքր. Դաւիթ էլաւ խա՛չ մը զարկաւ վանքին գլուխը. ապա վանքը - Մարութա Բարձր ԱՍՊԱՐԱՄԻՆ - իր հիման վրայ կանգնեցաւ...»:

Տ. Զիքունի կը շարունակէ. «Եւ ֆանի որ՝ վանքը կրցած է կանգուն մնալ միայն այն ատեն՝ երբ *դէնքի՛ վրայ* է դրուեր հիմը, կարելի՞ է հետեւցնել քէ՛ վանքին անունն ալ ատկէ է մնացեր, - ԱՍՊԱՐ-ա-ծին. ո՛չ երբեք *աստուածածին*...» (տես՝ Տիգրան Զիքունի, *Սառունական*, Պէյրութ, 1960, էջ 17) :

56. Գ. Կիւլպենկեան, *Մեկնաբանութիւն*..., էջ 89:

նաեւ սումերական կրօնքին ու մշակոյթին ականդները փոխանցած են հայերու: Տրամաբանական նման եզրակացութեամբ մը ինչպէս կարելի է հասնիլ վերոյիշեալ «բացարձակապէս համոզուած» տեսակէտին, ուր ժամանակագրական բոլոր տուեալները խախտած են, դժուար է հասկնալ:

Տրամաբանական կարելի է նկատել այն իրողութիւնը թէ չորրորդ հազարամեակին հարաւային Միջագետքի մէջ արդէն իսկ հաստատուած սումերները, որոնք երրորդ հազարամեակին, ու մինչեւ այդ հազարամեակին վերջին քառորդը, իրենց ազդեցութեան զօտին ընդարձակած էին ամբողջ Միջագետքի վրայ ու անոր սահմաններէն դուրս, առեւտրական յարաբերութիւններ ունենային նաեւ Հայաստանի բնիկներուն հետ⁵⁷, բայց այդ մէկը դժուար թէ լեզուական, կրօնական ու մշակութային խոր ու բացարձակ ազդեցութիւն կարենար ձգել Հայաստան աշխարհին վրայ: Աւելի տրամաբանական եւ ընդունելի պէտք է նկատել այն, որ հուրրինները, որոնք երկրորդ հազարամեակի սկիզբին ասպարէզ կ'իջնեն Միջին Արեւելքի մէջ, ու յաջորդ մէկ քանի դարերուն իրենց զինական ներկայութիւնը կը պարտադրեն հիւսիս արեւմտեան Միջագետքի ու հիւսիսային Սուրիոյ մէջ, եւ որոնք «անհաւանական չէ որ ժամանակ մը արեւմտեան Հայաստանի վրայ ալ տիրած ըլլան»⁵⁸, կը հանդիսանան սումեր լեզուն ու սումերական մշակոյթը Հայաստան փոխադրող ժողովուրդը:

Արդարեւ, հուրրինները, որոնք կը հանդիսանան հայ ժողովուրդի բազմացուցիչ մէկ տարրը, «ոչ միայն նախաւոր Սուբարի ժողովուրդին բաւական զարգացած քաղաքակրթութիւնը որդեգրեցին, այլ եւ Բաբելոնացիներէն բարձր քաղաքակրթութեանէն զօրաւոր տարրերը փոխ աւելին: Հուրրիններու քրմական դասակարգը դիր ու դպրութիւն ալ ունեցաւ, սորվեցաւ Բաբելոնացոց բեւերագիրներու բարդ դրութիւնը վարժ կերպով դործածել: Անոնք Սումերեան լեզուի սրբազան գրականութիւնն ալ սերտած են: ... Պողազէոյի բնադիրներուն մէջ Հուրրիարէն լեզուով կը գտնուին աղօթքներ եւ ոգեկոչումներ, նաեւ զբոյցներ կամ առասպելներ ու միպոսանական երգեր, որոնք Սումերերէնէ թարգմանութիւն են: Այսպէս, Հուրրինները շատ բան Սումերերէնէ փոխադրած են իրենց լեզուին, եւ յետոյ այս Հուրրիարէն թարգմանութիւնները փոխանցած՝ իրենց արեւմտեան դրացիներուն, Ուղարիտցոց եւ Սատտուսաի Հաթեանց»⁵⁹:

57. Եղիա Ս. Քասունի, Հայ Մշակոյթի Պատմութիւնը, Պէյրութ, 1954, էջ 21:

58. Նոյնը, էջ 32:

59. Նոյնը, էջ 33, նաեւ տես՝ Եղիա Ս. Քասունի, Նախահայկական Հայաստանը:

Բայց խօսքը տանք նաեւ սումերագէտ Ս․ Գրէյմըրի․

«Յամենայն դէպս, սեմական ժողովուրդը մըն էր – ամորացիներ – որ վերջ մը դրաւ սումերներուն քաղաքական, ցեղային եւ լեզուական գոյութեան : Վստահօրէն [սակայն] պարտեալը պարտութեան մատնեց յաղթականը, եւ ամորացիները, ծանօթ որպէս բարեւացիներ, – քանի որ իրենց մայրաքաղաքը Բաբելոնն էր, – ամբողջութեամբ որդեգրեցին սումերական մշակոյթն ու քաղաքակրթութիւնը : Բացի լեզուէն, բարեւական կրթական դրութիւնը, կրօնքը, առասպելաբանութիւնը եւ դրականութիւնը գրեթէ նոյնանման են սումերականին, բացառելով անշուշտ ակնկալելի փոփոխութիւններն ու տարբերակները, ենթակայ՝ քաղաքական զարգացումներու եւ ժամանակի թաւալին : Եւ քանի որ բարեւացիները, իրենց հերթին, քիչ ազդեցութիւն չբանեցուցին իրենց նուազ քաղաքակրթ դրացիներուն վրայ՝ յատկապէս ասորեստանցիներուն, հիթիթներուն, հուրրիններուն եւ քանանացիներուն, անոնք, նոյնքան սումերները իրենք, օգնեցին սերմանելու սումերական մշակութային հունտերը հին Միջին Արեւելքի բոլոր շրջաններուն մէջ : Եւ այս՝ մեզ կը հասցնէ Սումերի ժառանգութեան, դարերու ընդմէջէն մինչեւ մեր ժամանակները, թէեւ մեր դարուն՝ այս աւանդը այլեւս դործօն եւ ստեղծագործ ազդիւր չէ մշակութային զարգացման, բայց աւելի [չատ] անցեալ տխուր [յուշ] մը, եթէ ոչ ամբողջովին չներշնչող նիւթ մը հին պատմութեան»⁶⁰ :

Դիմենք այլ մասնագէտներու կարծիքին նաեւ․

«Իւրացնելով բարեւական աւանդներէն շատերը, հուրրինները ճակատագրական դեր մը խաղացին փոխանցելով դանոնք Բաբելոնէն անդին՝ Սսորեստան, Պաղեստին եւ Փիւնիկէ, եւ անուղղակի կերպով մինչեւ Իսկ Յունաստան : Անոնց ամենէն ակներեւ ազդեցութիւնը հիթիթ մշակոյթին վրայ էր․ կրօնական, դրական եւ պատմագրական նիւթերը Հաթուսասի հիթիթ արքայական արխիւներէն, բոլորն ալ կը մատնեն զօրաւոր հուրրիական ազդեցութիւն մը, եւ մարդ կրնայ խօսիլ Անատոլուի մէջ իրաւ հուրրի-հիթիթ համակեցութեան մը մասին»⁶¹ :

Իսկ պատմագրութեան համար անվիճելի փաստ է հիթիթ մշա-

տան, Պէյրութ, 1950, էջ 60-75 :

60. S. Kramer, **The Sumerians**, pp. 288-289.

61. W. W. Hallo, W. K. Simpson, **The Ancient Near East**, p. 110; M. Coveny, **The Ancient Near Eastern...**, pp. 88-89.

կոյթին ու քաղաքակրթութեան աղբեցութիւնը Հայաստան-Ազգի վրայով՝ Հայաստանի եւ հայ ժողովուրդի վրայ :

Հայ-սովետական յարաբերութիւններու զոյուլթեան ամենէն ջերմ պաշտպանն է Մարտիրոս Ս. Գալուսեցեան : Ան օգտադործելով հնադիտական շարք մը պեղումներու տուեալներէն եզրակացուած վարկածները, իր հերթին կ'եզրակացնէ թէ՛ Միջագետքի իջնելէ առաջ, սովետներ իրենց հայրենիք ունեցած են Հայկական Բարձրաւանդակը : Տեսակէտ, որ լաւագոյնս կը պատշաճի հայ-սովետական անմիջական ու սերտ առնչութիւնները հիմնաւորելու :

Մ. Ս. Գալուսեցեանի համաձայն, «Գլխաւորեանը յայտնի է դարձել, որ սովետներէն լեզու խօսող եւ սովետական մշակոյթը կրող այս հնարամիտ եւ տաղանդաւոր ժողովուրդը (նրանց ամենամեծ նրաճումը պիտի համարել զբնի ստեղծումը) նախապէս եղել է լեռնային ժողովուրդ : Նրանց նախկին բնակավայրը եղել է Միջագետքի եւ Ասորիքի հիւսիսում տարածուող լեռնային երկիրները՝ մեզ յայտնի Արարատը (Կորդուքը), Արմէն-Շուպրիան, եւ Կիլիկիան եւ նրանց յարող ու հարեան տերիտորիաները»⁶² :

Ապա՝ աւելի ինքնավստահ, Գալուսեցեան կը շարունակէ. «Հետազոտողները ոմանք սովետներին բերում են Փոքր Ասիայից, ոմանք էլ Կովկասից : Միեւնոյնն է՝ նրանք Սովետեր իջնելուց առաջ երկար ժամանակ բնակուել են Հայկական Լեռնաշխարհում եւ ապա Հիւսիսային Միջագետքում...»⁶³ :

Ըսենք անմիջապէս որ Գալուսեցեան իր այս տեսակէտը հիմնաւորելու համար գլխաւորաբար կ'ապաւինի Սեթոն Լօյտի «Ձոյգ Գետեր» (Օքսֆորտ, 1943) աշխատասիրութեան, որմէ կատարած բազմաթիւ մէջբերումներէն ետք, — որոնք կը խօսին սովետ ժողովուրդի «լեռնային այդ բնակավայրերից զէպի Սովետեր տանող ճանապարհներն ընդգրկող տերիտորիայի վրայ մի շարք հին կացարաններէ հնադիտական պեղումներ[էն] յայտնաբեր[ուած]... սովետական ուրուքեան մշակոյթի նախատիպը հանդիսացող նիւթական մշակոյթի մնացորդներ»⁶⁴ մասին, — ու ապա օգտադործելով նոյն հեղինակին եզրակացութիւնը, կը հասնի վերոգրեալ ինքնավստահ տեսակէտին⁶⁵ :

Անկախ այն հարցէն թէ՛ այսօր ի՞նչ է զլիտուեան խօսքը սովետներու նախահայրենիքի մասին, — որուն երկարօրէն անդրադար-

62. Մարտիրոս Ս. Գալուսեցեան, Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրբատուն, Պէյրութ, 1973, էջ 71 :

63. Նայնը, էջ 73 :

64. Նայնը, էջ 72 :

65. Տես՝ նոյնը, էջ 72, ծան. 38-43, էջ 73 ծան. 45 :

ձանք մեր յօդուածի ստաջին էջերուն մէջ, եւ ուր կը պարզուի թէ Հայկական Լեոնաշխարհը, եւ կամ՝ Փոքր Ասիան սումերական նախահայրենիք ընդունող կարծիք դոյութիւն չունի, — այժմ անդրադառնանք Սեթոն Լօյտի եղբակացութեան, որուն այնքան շատ կ'ապաւինի Գալուքեան: Եղբակացութիւն, որ ժամանակի ընթացքին կը մերժուէր նոյն ինքն Սեթոն Լօյտի կողմէ, որմէ սակայն անտեղեակ ըլլալ կը թուի Գալուքեան:

Մեր արամադրութեան սակ ունինք Սեթոն Լօյտի վերոյիշեալ աշխատասիրութեան երրորդ հրատարակութիւնը (1961 թ.), ուր հեղինակը կը գրէ. «Սումերները ի ընէ լեոնային ժողովուրդ էին»⁶⁶: Եւ ապա՝ «Ուրուքի⁶⁷ ժամանակաշրջանի բազմաթիւ նորութիւնները, ու յանկարծական փոփոխութիւնը՝ նկարագրին մէջ ընդհանրական այնպիսի յարմարանքի մը, որ խեցեղէն է, անմիջապէս թելադրեց որ անոր սկզբնաւորութիւնը կը զուգադիպի օտար ժողովուրդի նոր խումբի մը Իրաք հասնելուն: Այս ենթադրութեամբ հետադարձութիւն մը կատարուած էր անոնց հաւանական ծագումին [մասին]: ու շուտով՝ դճացուցիչ կերպով փաստարկուած էր թէ անոնք (սումերները, Ե. Շ. Ք.) եկած էին ինչ որ այժմ Թուրքիա կամ Անատոլիա է»⁶⁸:

Սակայն Սեթոն Լօյտի համար վերջնական ըլլալ չի թուիր իր այս եղբակացութիւնը: «Հին Մերձուոր Արեւելքի Արուեստը» խորագրով իր մէկ այլ աշխատասիրութեան մէջ, հրատարակուած նոյնպէս 1961 թ.ին, սումերներու նախահայրենիքը այս անգամ ան կը տեղափոխէ Իրանական Բարձրաւանդակ: Կարծիք, որուն համար «այլեւս շատ քիչ կասկած դոյութիւն ունի»: Ահա թէ ինչպէս ան կը բանաձեւէ իր այս նոր տեսակէտը. «Միջագետքի մէջ, ամբողջ մշակութային դարդացումը, որուն համար կը խօսինք, սովորաբար վերագրուած է սումերներու վաղահաս կարողութեան: [Սումերներ], ոչ-հնդեւրոպական, ոչ-սեմական ժողովուրդ մը, որոնց ներկայութիւնը Ստորին Տիգրիսի եւ Եփրատի հեղեղատային շրջանին մէջ պատմականօրէն վրկայուած է երրորդ հազարամեակի սկիզբէն ստիին: Այսօր, այլեւս շատ քիչ կասկած դոյութիւն ունի անոնց ծագումին մասին: Անոնք առաջին եկեղծներն էին Պարսից Մոցի գլուխը⁶⁹ չորրորդ ճահիճներուն.

66. Seton Lloyd, **Twin Rivers**, Oxford, 1961, p. 5.

67. Նախկին ամուսնով էանա, որ կը նշանակէ Ան-ի՝ երկինքի աստուծոյ տունը, աստուածաշնչական էրիսը, մեր օրերու Ուարգան:

68. S. Lloyd, **Twin Rivers**, p. 6.

69. «Պարսից Մոցի գլուխը քերես Պարսայէն 125 մղոն հիւսիս էր. կամ՝ այս շրջանը կրնար եւ ծովալիւն մը ըլլալ, Պարսայի վանդակորնով բաժնուած մոցէն» (H. Frankfort, **The Birth of Civilization...**, p. 44, f. n. 2).

անոնք ցած իջան Իրանական Բարձրաւանդակի սկզբնական բնակավայրէ մը, ուր իրենց հեռաւոր անցեալը կը մխրճուի նախապատմական գաղթերու նախատիպի մը մէջ»⁷⁰ :

Սակայն այստեղ կանգ չ'առնենք Սեթոն Լօյտ : Յամառ պրպտող, ու գիտական վերջին նորութիւններուն հետամուտ, ան կը փորձէ տեւապէս վերանայիլ իր տեսութիւնները : Սումերներու ծագման ու նախահայրենիքի հարցը կը մնայ անոր գլխաւոր հետաքրքրութիւններէն մէկը, որուն անդամ մը եւս կ'անդրադառնայ ան «Միջագետքի Հնագիտութիւնը» (Լոնտան 1978) խորագիրը կրող իր վերջին աշխատասիրութեան մէջ : Նկատի առած հարցին այժմէութիւնը ու միաժամանակ հեղինակին պարզած բոլորովին նոր տեսութիւնը այդ ուղղութեամբ, այստեղ ամբողջութեամբ կը ներկայացնենք այն հատուածը, որ «Սումերեան Նախնիթացիներ» ենթախորագրին տակ՝ կը խօսի այդ մասին :

«Հուսկ, պէտք է վերադառնանք սումերներու ծագման հարցին, որ անցեալին այնքան խորհրդածութեանց նիւթ դարձած է գիտնականներուն միջեւ : Հոս՝ ակներեւ վէճ մը ստեղծուած է ընդմէջ բանասէրներու տրամաբանութեան եւ հնադէտներու եզրակացութիւններուն : Ընդհանրապէս խնդիրը կը ծագի այն հարցին շուրջ, թէ նախահարստութիւններու «ժամանակաշջաններուն» յաջորդականութեան ո՞ր ժամանակակէտէն սկսած՝ ստորին Միջագետքի բնակիչները իրապէս «սումերներ» կրնան կոչուիլ : Ըսուած է թէ «Նախագրաճանաչութեան շրջանի նորարարութիւնները հաստատած են ինքնութիւնը, որ Միջագետքի քաղաքակրթութիւնը պահեց իր երկար պատմութեան տեւողութեան», եւ այս՝ ժամանակ մը ընդունուած էր որպէս զօրաւոր պատճառարանութիւն սումերներու «ժամանումին»՝ այդ ժամանակաշրջանի սկզբնաւորութեան : Արձանագրութեանց վերծանողներու առարկութիւնը վերոյիշեալ թեզին նկատմամբ մեծապէս հիմնուած է միակ ենթադրութեան մը վրայ, այն՝ որ պատմական արձանագրութեանց մէջ յիշատակուած, եւ Նախագրաճանաչման շրջանէն առաջ հիմնուած հին միջագետքեան քաղաքներէն ոմանք կրնան ոչ-սումերական անուններ ունեցած ըլլալ : Այս մէկը օրտագործուած է արգարացնելու համար ամբողջ ցանց մը հայեցողութեանց, հին եւ թերեւս սեմական ժողովուրդներու ենթադրական գաղթի մը մասին՝ Մերձաւոր Արեւելքի ամբողջ տարածքին : Հնադէտները, միւս կողմէ, կը մատնանշեն անորոշութիւնը սկզբնական ենթադրութեան եւ բացա-

70. Seton Lloyd, *The Art of the Ancient Near East*, New York, 1961, pp. 19-20.

կայութիւնը փաստի, թէ՛ այս անունները իրապէս դործածութեան մէջ էին նախքան գիրերու գլխուր: Ի վերջոյ անոնք տպաւորուած են Ուպայտի եւ Ուրուքի ժամանակաշրջաններուն միջեւ մշակութային շարունակականութեան տիրապետող փաստովը:

«Կրօնական հաւատքներու եւ կիրառութեանց շարունակականութեան միակ փաստը մասնաւորապէս համոզիչ է հնագէտի մը համար: Երեք վայրեր տպաւորիչ նպատակ մը կը բերեն այս փաստարկումին: Յաջորդականութիւնները էլ Ուպայտի մէջ ինքնին, Թեյ Ռեքայրի եւ Էրիտուի՝ ժամանակազրականօրէն կը սկսին աւանդական Ուպայտ դաղութով մը, եւ Էրիտուի հետ հանդիսութեամբ, կըրնայ ենթադրուիլ որ առաջին երկուքն ալ ունեցած են Ուպայտ ժամանակաշրջանի տաճար մը, յաճախակի կերպով վերանորոգուած: Այս երկու վայրերուն մէջ, բնակավայրերը իրենք լքուած էին ժամանակակէտի մը, որ կը զուգադիպի այսպէս կոչուած Ուպայտեան ժամանակաշրջանի վերջաւորութեան: Յամենայն դէպս նոյնը չէր [պարագան] տաճարին, որ Էրիտուի մէջ եղածին նման, կրկին ու կրկին վերակառուցուած էր եւ ընդարձակուած՝ նախադրաճանաչութեան ժամանակաշրջանի ամբողջ տեւողութեան: Ուպայտի մէջ Վազ Հարստութեան ժամանակներուն վերակառուցուած էր ան, եւ Էրիտուի մէջ անոր փլատակները ընտրուած էին վիկիլուրաթի մը կառուցման վայրի համար՝ Ուրի Երբորդ Հարստութեան թագաւորներուն կողմէ: Մէկը նոյնպէս կը նկատէ թէ ե՛ւ Ուպայտի ե՛ւ Ուքայրի մէջ, հին Ուպայտեան բնակավայրի հողաբլուրը օգտագործուած էր որպէս դերեզմանատեղի՝ Հարստութեան ժամանակներու սումերներուն կողմէ:

«Մտքի մէջ ունենալով այս կացութիւնը, որեւէ ժամանակի մէջ բնիկ ժողովուրդի մը փոխարինումը օտար գաղթականներով, կը դառնայ անհտանակալ վարկած (ընդգծումը մեր կողմէ, Ե. Հ. Գ.):

«Կը մնայ վերջին հարց մը՝ հարաւային Միջագետք հաստատուած առաջին գաղթողներու բուն ծագումին մասին: Այժմ մեծ հետաքրքրութիւն ստեղծուած է Արաբական Ծոցի հարաւային ծովեզրին եւ Պահարէճնէն արեւմուտք՝ ներքամաքային շրջանին վրայ տարածուած Ուպայտեան բարդաւաճ բնակավայրերու յայտնաբերումով: Անոնց առաջին երեւումը այս շրջանին մէջ առ այժմ թուագրուած է Ուպայտեան ժամանակաշրջանի միջին փուլին մէջ: Առաւել վերջերս սակայն, ապահովուած է նիւթրոնային դործօնութեան փաստարկութիւնը, որ ցոյց տուած է թէ այս բնակավայրերու բնակիչներուն գործածած խեցեղէնը ներածուած է Սումերէն, որուն հետ, հետեւողաբար, իրենց յարաբերութիւնը սկսեց է եղած ըլլար գաղութարարներու եւ կամ առեւտրականներու յատուկ յարաբերութիւն մը: Վարկածը՝ Ուպայտեան մշակոյթի «վաղ օնախ»ի մը, այսպիսով կը դառնայ առա-

ւելաբար անիմաստ» (ընդդժումը մեր կողմէ, Ե. Հ. Ք.)⁷¹ :

Ճիշդ է որ Սեթոն Լօյտի կողմէ առաջադրուած ու պաշտպանուած եզրակացութիւնները նախապէս ալ ունեցած են իրենց կողմնակիցները (Ճորճ Ռու, Ճ. Է. Սմիթ, Ի. Տիալոնֆ), սակայն անոնց ենթադրական ու վարանոտ յայտարարութիւններուն դիմաց, Սեթոն Լօյտի՝ դիտական վերջին փաստակումներու ապաւինած ինքնավստահ հետեւութիւնները բոլորովին նոր ասպարէզ մը կը բանան սումեր ժողովուրդի ծագման ու նախահայրենիքի հարցերով դրազող դիտականներուն առաջ : Անկախ այն իրողութենէն թէ Սեթոն Լօյտ որքան հեռու է այժմ 1943 թ.ին ներկայացուցած իր եզրակացութենէն (որուն այնքան ապաւինած է Մ. Ս. Գալուքչեան), հետաքրքրական է նկատել թէ դիտական փաստարկումներով ձեռք բերուած եզրակացութիւնները առաւել եւս կը մօտենան նոյն ինքն սումեր ժողովուրդի այն հաւատքին, «որ իրենք Միջագետքի մէջ ապրած են աշխարհի ստեղծումէն ի վեր» :

Հայ-սումերական յարաբերութիւններու մասին մեղի ծանօթ վերջին ակնարկութիւնը կու դայ Ռաֆայէլ Իշխանեանի կողմէ : Հայ ժողովուրդի ծագման հարցին նուիրուած իր մէկ ուսումնասիրութեան մէջ՝ հեղինակը, ի միջի այլոց կը գրէ .

«Հայերէնի բառային ընդհանրութիւնները շումերերէնի, աքքադերէնի, խեթերէնի հետ (խեթերէնի վերաբերմամբ խօսքը չի վերաբերում հնդեւրոպական մայր լեզուից եկող ընդհանրութիւններին) ակնառու նշաններ են վերջին երեք լեզուների հետ հայերէնի երկարատեւ շփման, քանի որ բոլոր դէպքերում խօսքը վերաբերում է այդ լեզուներից հայերէնի մէջ թափանցած եւ այդ լեզուների մէջ հայերէնից անցած կամ հայերէնի ու այդ լեզուների մէջ տուեալ ժամանակի մի այլ լեզուից թափանցած բառերին :

«Հայերէնի հարաւային երկարատեւ շփումները արտայայտուած են հայ-շումերական եւ հայ-աքքադական ընդհանրութիւններով : Միջագետքում եւ նրա հիւսիսում շումերների առկայութիւնը վկայուած է մինչեւ մ.թ.ա. 3-րդ հազարամեակի կէսերը՝ սկսած անիմանալի ժամանակներից, եւ հայերէնի ու շումերերէնի շփում նշանակում է մինչեւ մ.թ.ա. 3-րդ հազարամեակը շումերների եւ հայերի շփում Մեծ Հայքի տարածքի հարաւում : Երբեմն հայ-շումերական բառային ընդհանրութիւնների քանակը դնում են 250⁷² բայց նման ցու-

71. Seton Lloyd, *The Archaeology of Mesopotamia*, pp. 62-64.

72. Ակնարկութիւնը կ'երթայ Մ. Ս. Գալուքչեանի, տես՝ Արմէն եւ Հայ Անունների Մագումը..., էջ 43-90:

ցակի քննութիւնը զբնութեամբ է նաեւ մեծաքանակ պատահական նըմանութիւններ, մինչդեռ թուում է, որ առնուազն շուրջ երկու տասնեակ իրական ընդհանրութիւններ կարելի է նշել»⁷³ :

Մեր ստացած ապաւորութիւնը այն է, որ Իշխանեան իր ինքնավրտահ հետեւութիւնը, թէ՛ «Տայերէնի ու շումերերէնի շփում նշանակում է մինչեւ մ.թ.ա. 3-րդ հազարամեակը շումերերի եւ հայերի շփում Մեծ Հայքի տարածքի հարաւում», քաղուած է Մ. Ս. Գալուքեանի՝ սումերները «Սումեր իջնելուց առաջ երկար ժամանակ բնակուել են Հայկական Լեռնաշխարհում» եզրակացութենէն, որուն երկարօրէն անդրադարձանք նախորդ էջերուն մէջ :

Որքան եւ զոչ Մ. Ս. Գալուքեանի կողմէ առաջ քաշուած հայ-սումերական բառային ընդհանրութիւններու քանակին նկատմամբ, Իշխանեան կը հաւատայ թէ «շումերերէնի բառապաշարի լեզուարանական ուշադիր համեմատումը հայերէնի բառապաշարի հետ հայ-շումերական շփումները շատ անակնկալներ պէտք է բացայայտի»⁷⁴ : Սակայն, երբ մէկ կողմէ ապագային տարուելիք աշխատանքի մը կատարածելի արդիւնքին նկատմամբ մեծ յոյսեր կը ներշնչէ Իշխանեան, միւս կողմէ մոռացութեան կու տայ հուրրիններու խաղացած միջնորդի դերը սումերերէնի եւ հայերէնի միջեւ, որուն փաստերը ծանօթ են պատմագրութեան :

Սումերներու ծագման ու նախահայրենիքի, ինչպէս նաեւ հայ-սումերական յարաբերութիւններու մասին եղած պրպտումները մեզ կը հասցնեն հետեւեալ եզրակացութիւններուն .

Ա. Տակաւին որքան ալ վիճելի սումեր ժողովուրդի ծագման ու նախահայրենիքի հարցը (սպասելով Սեթոն Լօյտի առաջադրած վերջին եզրակացութեան հանդէպ զիտական աշխարհին դիրքորոշումը), սումերներու՝ Հայկական Լեռնաշխարհի կամ Բարձրաւանդակի մէջ գտնուած ըլլալու վարկածը ոչ մէկ զիտական պաշտպանութիւն կրնայ ստանալ այսօր :

Բ. Հայերէն լեզուի, ինչպէս նաեւ հայկական կրօնական հաւատալիքներու եւ աւանդութիւններու մէջ սումերերէնի եւ սումերականի ազդեցութիւնը կը բացատրուի միայն այդ դժուր հուրրիններու խաղացած միջնորդի դերով :

73. Ռ. Իշխանեան, Համեմատական Լեզուաբանութեան նոր Յայտնադրումները եւ Հայերի Ծագման ու Հնադոյն Պատմութեան Հարցերը, «Բանբեր Երեսամի Համալսարանի», քիւ 2, 1979, էջ 100 :

74. Նոյնը, էջ 100-101 :

ABOUT THE SUMERIANS AND ON THE QUESTION OF ARMENO-SUMERIAN RELATIONS

YERVANT H. KASSOUNY

(Summary)

In the last two decades a tendency has started to pave its way in the Armenian historiography, trying to prove a relation in the Sumerian and the Armenian languages, and hence, a close relation between Sumerians and Armenians, which has developed, according to the trend, on the Armenian Plateau, where the Sumerians have lived before migrating to southern Mesopotamia.

After a detailed survey of modern historiographical evidences and conclusions on the question of Sumerian origin and language, the author concludes:

A. There is no scientific evidence to defend the speculation that the Sumerians have lived on the Armenian Plateau,

B. The Sumerian traces in the Armenian language, and the Sumerian influence on the old Armenian beliefs and traditions are carried to Armenia by the Hurrians.